Տ. Տ. Վ. ԱԶԳԵՆ Ա Վ.ԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ Վ.ԵՑԵՐՈՐԴ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ՄԵԿՆՈՒՄ

Հունիսի 9-ին, չորեքշաբթի, Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը ձեռնարկեց արտասահման կատարելիք Իր վեցերորդ հովվապետական ուղևորության, սրտագին հրավերներով Բուլղարիայի Նորին Սրբություն Տ. Կիրիլ Պատրիարքի և Ռումինիայի Նորին Սրբություն Տ. Ժուստինիան Պատրիարքի։

Սույն ուղևորության ժամանակ ծրագրվել էր անշուշտ նաև Բուլղարիայի և Ռումինիայի թեմերի առաջնորդ գերաշնորհ Տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյանի և երկու թեմերի պատվարժան թեմական խորհուրդների սրտագին հրավերով այցելել վերոհիշյալ երկու թեմերի եկեղեցիներն ու վանքերը և անձամբ տանել այս հյուրընկալ երկինքների տակ ապրող հայ ժողովրդի հարազատ բեկորներին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կենսարար օրհնությունը և վերածնված Մայր Հայրենիքի հայության ջերմ ողջույնը։

Ինչպես նախորդ հայրապետական ուղևորությունները, վեցերորդն էլ հանդիսանում էր նույնքան պատմական և իմաստալից իրադարձություն Սփյուռքի մեր ազգային-եկեղեցական տարեգրության մեջ, մանավանդ նրանով, որ Նորին Ս. Օծությունը ծնվել ու ապրել էր ռումինական հողի վրա, գործել երկար տարիներ որպես ուսուցիչ, ազգային-հասարակական գործիչ և 1943—1955 տարիներին՝ որպես առաջնորդ Ռումինիայի թեմի, իսկ 1954-ից՝ նաև որպես Բուլղարիայի հայոց առաջնորդ։

Հունիսի 6-ին, կիրակի, երեկոյան ժամը 4.50-ին, Վեհափառ Հայրապետը առաջնորդվում էր Մայր Տաճար, աղոթելու բարեհաջող ուղևորության համար։

Միաբանության անունից Նորին Ս. Օծության բարի ճանապարհ էր մաղթում Տ. Սահակ արքեպիսկոպոսը։

Ժամը 5-ին, Վեհափառ Հայրապետը առաջնորդվում էր Երևանի օդանավակայանը, ուր Նորին Ս. Օծության բարի ճանապարհ մաղթելու համար եկել էին Մայր Աթոռի միաբանությունը, Դերագույն Հոգևոր Խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Մայր Աթոռի պաշտոնեությունը, Արարատյան թեմի թեմական խորհրդի անդամներն ու քահանայից դասը, պաշտոնական այլ անձնավորություններ և հավատացյալներ։

Վեհափառ Հայրապետին ճանապարհում էր նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը։

Ժամը 5.30-ին ինքնաթիռը անջատվում է Հայրենի հողից, բարձրանում երթեր և ուղղություն վերցնում դեպի Մոսկվա, բոլոր ներ-

Վեհափառ Հայրապետը ժամանում է Սոֆիայի օդանավակայանը

կաների սրտագին բարեմաղթությունների մեջ։

Վեհափառ Հայրապետի սույն ուղևորության կապակցությամբ, Մայր Աթոռի դիվանի կողմից տրվում է 7 հունիս թվակիր հետևյալ պաշտոնական հաղորդագրությունը.

«Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա, Սրբազնագույն Կաթողիկոս Ամենայն Հայոց, Բուլղարիայի Ամենապատիվ Տ. Կիրիլ և Ռումինիայի Ամենապատիվ Տ. Ժուստինիան սրբազան պատրիարքների, ինչպես նաև հայոց երկու թեմական խորհուրդների հրավերներով, հունիսի 6-ին, մեկ ամսով մեկնեց Բուլղարիա և Ռումինիա հովվապետական այցելության»։

Սույն ուղևորության ժամանակ Նորին Ս. Օծության ընկերակցում է Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ գեղաշնորհ Տ. Հուսիկ Եպիսկոպոս Սանթուրյանը, և որպես գավազանակիր՝ Մայր Աթոռի միաբան հոգեշնորհ Տ. Գևորգ վարդապետ Սեբայդարյանը։

Հունիսի 6-ին, կիրակի, երեկոյան ժամը 8.30-ին, Մոսկվայի Վնուկովոյի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորում են Մոսկվայի և Հյուսիսային Կովկասի հայոց առաջնորդ գեղաշնորհ Տ. Պարգև Եպիսկոպոս Գևորգյանը, Մոսկվայի հայոց Ս. Հարություն եկեղեցու եկեղեցական խորհրդի անդամներ և հավատացյալներ։

Նորին Ս. Օծության դիմավորում են նաև ՍՍՌՄ Մինիստրների սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ռյազանովը և խորհրդի աշխատակից Սոլովյովը։

Հայոց Հայրապետին դիմավորում է նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը։

Հունիսի 9-ին, շաբաթ երեկոյան, առավոտյան ժամը 8-ին, Մոսկվայի Շերեմետևոյի միջազգային օդանավակայանում Վեհափառ Հայրապետին և շքախմբի անդամներին ճանապարհում են Մայր Աթոռի միաբանության, Մոսկվայի հայոց եկեղեցու հոգևորականության, եկեղեցական խորհրդի անդամներ, Տ. Պարգև Եպիսկոպոս Գևորգյանի գլխավորությամբ։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին ողջերթ են մաղթում նաև ՍՍՌՄ Մինիստրների սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի տեղակալ Ռյազանովը, խորհրդի աշխատակից Սոլովյովը և Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը։